ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մասնակից՝ Ա. ՉԱՔԱՐՅԱՆ

Դպրոց՝ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ Վ. ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Վերապատրաստող՝ Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Վաղարշապատ 2022թ

Բովանդակություն

Նախաբան…….3

Հետազոտական համատեքստ, գործնական համատեքստ…4

Տվյալների մշակում և վերլուծում…….20

Ամփոփում……..21

Գրականություն…….22

Նախաբան

Հարցերի կիրառումը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է,և դրանց ճիշտ օգտագործումը կարող է զգալիորեն բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Քրիստիան Չինը իր աշխատություններից մեկում նշում է,որ իրական ուսուցում ապահովվելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը:

Ըստ նրա դա բացահայտումների փուլ է ,որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ թե ուսուցիչը:**Խնդիրը** հետևյալն է.հարցադրումների միջոցով դասարանում պասիվ աշակերտներին դասին ընդգրկելը: Աշխատանքի նպատակն է **վերջնաարդյունքում** ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է զբաղեցնում:ՈՒսուցման արդյունավետության և աշակերտների ներգրավվածության համար դիտարկվել է հարցադրման մի քանի ռազմավարություններ:Պատմության դասի մեջ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում:Հարցադրումների կիրառմամաբ կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական

մտածելակերպը,զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա, ինչպես նաև մեծացնել աշակերտների ակտիվացումը դասապրոցեսին: Ստորև ներկայացնում եմ հարցադրումների մի քանի ռազմավարություններ որոնք նպաստում են աշակերտների ակտիվացմանը դասապրոցեսին:

Հետազոտական համատեքստ, գործնական համատեքստ

ՈՒսումնառությունը իրականացնելու համար ընտրել եմ 11-րդ դասարանը:Դասարանում կա 14 աշակերտ:Դասարանը ակտիվ է,խելացի,բայց նրանցից մի քանիսը աչքի են ընկնում իրենց պասիվությամբ:

1. Աղաջանյան Նարեկ
2. Առուստամյան Էլմիրա
3. Արզումանյան Էդգար
4. Ջամալյան Գարիկ

Նպատական է նրանց ավելի շատ ընդգրկել դասապրոցեսին: Ընտրել եմ հարցադրումների մի քանի տեսակներ,որոնք կնպաստեն աշակերտների ներգրավվածության մեծացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

1.Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն:

Սա ամենատարածված մեթոդն է,որի ընթացքում հնարավորություն է տրվում իմանալու նյութի յուրացման մակարդակը կամ պարզելու,թե որքանով են աշակերտները յուրացրել նյութը: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում, սակայն ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը

Դասի թեման էր՝ Ազատագրական շարժումները 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում

Դասի պլան

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Ազատագրական պայքարի նոր փուլը

ԱՌԱՐԿԱՆ՝Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-րդ դասարան

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ գիտելիքների և կարողությունների ստուգման և շտկման դաս

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ՝ Հարցադրումներ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ Գրատախտակ, դասագիրք,քարտեզ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր.

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական – Ներկայացնել 17-րդ դարի երկրորդ կեսին հայ ազատագրական պայքարի աշխուժացման ներքին և արտաքին նախադրյալները բ) սոցիալական – Ինչ գործնական քայլերով նշանավորվեց ազատագրական պայքարի այս շրջանը Ներկայացնել, թե ինչ իրադարձություններ նպաստեցին հայ քաղաքական ուժերի կողմնորոշմանը դեպի Արևմտյան Եվրոպա
ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Ժամանակաշրջանի ճիշտ ընակալում Ճիշտ վերլուծել Հայաստանի համար ստեղծված իրավիճակը: Գնահատի և արժևորի ժամանակի գործիչների գործունեությունը:

Խթանում **10 րոպե**	**Հարց – պատասխան:** 1Ովքեր էին Խաչատուր Գաղատացին, մահտեսի Շահմուրատը և Հովհաննես Թութունջին 2) Ինչ գիտեք Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գործունեության մասին 3)Ինչ գիտեք Իսրայել Օրու գործունեության մասին 4)Ներկայացնել Էջմիածնի և Անգեղակոթի ժողովների որոշումները
Իմաստի ընկալում **Կշռադատում 15 րոպե**	Ինչ նշանակություն է ունեցել Իսրայել Օրու գործունեությունը հայ ազատագրական պայքարի պատմության մեջ
	Դասն անցկացրել եմ էլեկտրոնային դասարանում : Նկարների և նյութերի առկայությամբ:

Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	2 աշակերտ ստացել են 8 և 1 աշակերտ 9
	Կարևոր տեղեկությունները դուրս բերել և սովորել:

Դասարան՝11 -րդ - Ի՞նչն այս դասին լավ ստացվեց:

Աշակերտները ակտիվ էին ,նախաձեռնող և հիմնականում ներգրավված էին դասապրոցեսում:

Ի՞նչն անակնկալի բերեց ինձ:
Աշակերտները ունեցան յուրահատուկ մոտեցում ազատագրական ծրագրերին առաջ քաշելով իրենց սեփական տեսակետները:

Ի՞նչը պլանավորվածի պես չստացվեց:

ՈՒշադրությունս ավելի շատ սևեռված էր թիրախային խմբի վրա:

Ի՞նչը կփոխեի:
ՈՒժեղ աշակերտների համար ավելի բարդ հարցեր կնախապատրաստեի:

Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից:

Արժևորեցին անկախ պետականության ունենալու գաղափարը:
Հասա՞ արդյոք վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացա:

Այո կարևոր ձեռքբերումներից մեկն այն էր,որ թիրախային խմբի աշակերտներից մեկը գնահատեց անկախ պետականության դերը այսօր առավել քան երբևէ

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա աշխատե՞ց:

ՈՒշադրության կենտրոնում թիրախային թույլ խումբն էր,որոնք աշխատեցին բավականին արդյունավետ:

Պարզաբանել 17-րդ դարի երկրորդ կեսի և 18-րդ դարի ազատագրական շարժումների նշանակությունը հայոց պետականության կայացման ճանապարհին

Այս հարցում աշակերտները ունեին տարբեր մոտեցումներ, նրանց պատասխանները ինքնատիպ էին, սակայն հստակ ու մեկնաբանված։

Ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով փորձեցի հարցս այլ կերպ ձևակերպել:

Ինչու չիրականացավ Օրու Պֆալցյան ծրագիրը

Հարցը սկսվեց դասարանում շատ ակտիվ քննարկվել և աշակերտների հիմնական մասը այդ թվում նաև պասսիվ աշակերտները սկսեցին մասնակցել քննարկմանը:

Այնուհետև հարցերի շրջանակն ավելի ընդլայնվեց:Աշակերտներին հանձնարարվեց ներկայացնել այս ժամանակաշրջանի գործիչներին, որոնք զբաղվում էին ազատագրական գործընթացով:Աշակերտների ներգրավվածությունը ավելի մեծացավ:Սխալ և ճիշտ պատասխաններ հնչեցրած աշակերտները ակտիվ քննարկումից հետո հանգեցին համապատասխան եզրահանգման:

Այս ռազմավարության շրջանակում պարզ է դառնում ,որ հարցերի ճիշտ ընտրությունը և դրանց ճ իշտ ձևակերպումը էականորեն կարող է նպաստել աշակերտների ակտիվացմանը և դասապրոցեսին ակտիվ մասնակցելուն:Եթե հարցադրման սկզբում դասին մասնակցում է 5-6 աշակերտ ապա դասի վերջում ավելի շատ աշակերտ էր մասնակցում նաև այն աշակերտները որոնք պասիվ էին՝Նարեկը, Էլմիրան, Էդգարը, Աիդան։ Դասից հետո արեցի եզրակացություն՝ Պատասխանին սպասելու ժամանակ բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ

պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ իմացաբանական վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավածությունը բարձրացնելու համար: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները. • Սովորողների պատասխաններն ընդարձակվում են: Ամբողջական նախադասությունների և վստահության ավելացում: Հայեցողական մտածողության դրսևորում: Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը: ՈՒսուցիչը վերանայում է սովորողներից ունեցած ակնկալիքները: Այսպիսով, ուսուցչի սպասման ժամկետի ավելացումը ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է մտածողության բարձր մակարդակներով արդյունավետ հարցերի համար: Սովորողները ևս օգտագործում են սպասման ժամանակն ավելի ամբողջական պատասխաններ ձևակերպելու համար:

2.Հարցական բառերի ռազմավարություն

Հաճախ հարցերի իմաստն ընկալվում է որպես հնարավոր պատասխանների ամբողջություն: Հարցերի գործառույթների սպեկտրը, սակայն, շատ լայն է.

- նոր տեղեկատվություն ստանալ.
- ունեցած տեղեկատվությունը պարզաբանել.
- խոսակցության թեման փոխել.
- ճիշտ պատասխանը հուշել.
- իրավիճակի մասին կարծիք կամ գնահատական արտահայտել.
- հարցի իմաստային կամ զգացմունքային լիցքը փոխելը:

Հարցը խթանում է նաեւ իմացական գործունեությունը, օգնում է որոշակի դարձնել եւ ձեւակերպել խնդիրները:

Երեխայի՝ հարցեր տալու կարողությունը ցարգացնելու համար

- Հարցին պատասխանելու երեխայի անկարողությունն անհրաժեշտ է դիտել որպես նորմալ երևույթ: Եթե խոսքը ստուգողական աշխատանքին կամ հսկողության այլ ավանդական ձևերին չի վերաբերում, ապա պատասխանելիս դժվարության առաջ կանգնելն ինքնին պետք է դիտվի որպես դրական երևույթ: Այս մեթոդը սովորողներին հնարավորություն է ընձեռնում գործնականում կիրառել ստացած գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային,ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Այս ռազմավարությունը կիրառելիս ավելի համոզվեցի, որ յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնելու մանկավարժորեն և հոգեբանորեն ճիշտ ընտրված և ներկայացված ցանկացած ուսումնական նյութ:

Այս մեթոդն օգտագործեցի հաջորդ դասին ելակետ ունենալով այն հիմնադրույթը,որ երեխաները միմյանցից տարբերվում են, ոչ թե ուսումնական ծրագրերի յուրացման կարողությունների սկզբունքային տարբերություններով, այլ իրենց մտածելակերպով, հոգեբանական առանձնահատկություններով, լեզվամտածողության եվ ընկալման յուրահատկություններով:

Նախօրոք աշակերտներին հանձնարարվել էր ծանոթանալ նյութին: Դասի թեման էր՝ Ազատագրական պայքարը Արցախում

Դասի պլան

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-ի դասարան

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ՝ Հարցադրման մեթոդ,Տ-աձև աղյուսակ ,

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,քարտեզ,գրատախտակ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր.

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա)1. ակադեմիական՝աշակերտները պետք է ծանոթանան ռազմաքաղաքական իրավիճակին Հայաստանում և Անդրկովկասում 2.Որոնք են ռուսների Կասպիական արշավանքի պատճառները և առիթը 3 հայ – վրացական զինակցությունը բ) որոնք էին թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժելու նպատակները 1.Կ. Պոլիսի ռուս-թուրքական համաձայնագրի էությունը 2.ներկայացնի Երևանի հերոսական պաշտպանությունը 3. պարզաբանի Արցախի զինված պայքարի արդյունքները և նշանակությունը

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Ցույց տալ պաշտպանական ամրությունների ստեղծման անհրաժեշտությունը Արցախում 1. Արցախում ազատագրական պայքարի կազմակերպման գործում ինչ դեր խաղաց Եսայի Հասան-Ջալալյանը 2.ներկայացնել զինված պայքարը Արցախում 3.մեկնաբանել, թե ինչու էր հայ զինական ուժերի մի մասը հակվել դեպի թուրքերի հետ բանակցությունները
ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ-ՆԵՐ	Աշակերտը պետք է իմանա - Կասպիական արշավանքի ընթացքն ու ավարտը վերլուծի – ինչու արցախցիները անցան պաշտպանական մարտավարության արժևորի – Կարբի գյուղի աննկուն պայքարը թուրքերի դեմ գնահատի – Արցախի զինված պայքարի նշանակությունը

Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով

Կազմակերպական մաս **3 րոպե**	Դասի ընթացքը -աշակերտների բացակայության հաշվառում- *դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին* -դասի նպատակների ներկայացում – *ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները*
Խթանում **10 րոպե**	Հարց – պատասխան Ինչ ընթացք և ավարտ ունեցավ Կասպիական արշավանքը 2. Թվարկել առավել հայտնի սղնախները 3. Ինչ հետևանքներ ունեցավ ռուս-թուրքական համաձայնագիրը 4. Ովքեր էին ղեկավարում Երևանի պաշտպանությունը 5. Ձեր կարծիքով ինչու ռուսները անտարբերության մատնեցին Ավան և Թարխան հարյուրապետերի օգնության խնդրանքը

Իմաստի ընկալում Կշռադատում **15 րոպե**	Ինչու սկսվեց ռուսական զորքերի Կասպիական արշավանքը Ինչ դերակատարում ունեցան հայերը թուրքերի կողմից Շուշին գրավելու անհաջող փորձերի ժամանակ Ինչ արդյունքներ և հետևանքներ ունեցավ Երևանի պաշտպանությունը հայերի համար:
Նոր դասի հաղորդում **15 րոպե**	Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Անդրկովկասում -Ռազմական ամրությունները Արցախում -Թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս
Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում **2 րոպե**	4 աշակերտ 8, 2 աշակերտ 6 Մեկնաբանել և արժևորել ժամանակի հասարակական քաղաքական գործիչների գործունեության նշանակությունը

Այս դասին նկատվեց թիրախային խմբի աշակերտների ակտիվություն, որոնք նախօրոք մտածել էին հարցեր և մասնակցություն էին ունենում դասապրոցեսին: Ուզում եմ ընդգծել, որ աշակերտների միմյանց տրվող հարցերը հստակ էին, նպատակաուղղված մտածելու տեղիք տվող, նրանք անգամ աշխատում էին պահպանել տրամաբանական հաջորդականություն: Աշակերտները հարցադրումների ժամանակ շատ զուսպ էին արձագանքում սխալ պատասխաննե-րին, այլ փորձում էին տրամաբանական մտածողության միջոցով դասընկերոջը հան-գեցնել ճիշտ պատասխանին:

Ուսումնառության համար ընտրված վերջին թեման էր Սյունիքի հայկական իշխանու

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Սյունիքի հայկական իշխանությունը

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-րդ դասարան

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ՝ Մտագրոհ,Հարցադրումների մեթոդ,բանավեճ,

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,քարտեզ,գրատախտակ վենի դիագրամ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական՝աշակերտները պետք է իմանան ինչպես ձևավորվեց հայկական իշխանությունը Սյունիքում 2.Ներկայացնի Դավիթ Բեկի առաջին հաղթանակները 3.Ինչու շահը ճանաչեց Դավիթ Բեկի իշխանությունը 4.Իմանա թուրքերի դեպի Սյունիք արշավանքի պատճառները բ) սոցիալական՝կարողանա ներկայացնել, թե ինչու թուրքերին սկզբում հաջողվեց հաղթանակներ տանել .ներկայացնի Հալիձորի հերոսական պաշտպանությունը .Գնահատի Հալիձորի հաղթանակը .Արժևորի Մեղրիի հաղթանակի նշանակությունը .Մեկնաբանի հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտման պատճառը
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Ներկայացնել Սյունիքի ազատագրական շարժման նշանավոր գործիչներին և նրանց դերը թշնամիների դեմ մղվող պայքարում

ԴԱՍԻ **ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**	Վերլուծել Սյունիքի ինքնապաշտպանության թուլացման պատճառները Համեմատել Սյունիքի և Արցախի զինված պայքարը և դրանց արդյունքները Վերհանել,որ Արցախում և Սյունիքում մղած հզոր շարժումը խոր հետք թողեց և մեծապես բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին

Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով

Կազմակերպական մաս **3 րոպե**	**Դասի ընթացքը** -աշակերտների բացակայության հաշվառում- *դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին* -դասի նպատակների ներկայացում – *ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները*

Խթանում **10 րոպե**	**Հարց – պատասխան:** 1) Ներկայացնել,թե ինչ կարևոր հենակետեր գրավեցին հայկական ուժերը 2) Ինչու Դ ավիթ Բեկը դաժանորեն պատժեց մելիք Բաղրին 4Ներկայացնել Հալիձորի և Մեղրու ճակատամարտերը
Իմաստի ընկալում Կշռադատում **15 րոպե**	Ինչու էին հայերը հակված դեպի ռուսները Զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտումը ինչ հետևանք ունեցավ, ում կողմնորոշումն էր ավելի ճիշտ Արդյոք կարելի էր խուսափել թուրքերի հետ առճակատումից

Նոր դասի հաղորդում 15 րոպե	*-Սահիկաշարի կիրառություն* -Ամփոփելով նախորդ երկու դասերը, ներկայացնել թուրքերի դեմ պայքարի ականավոր գործիչներին -
Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	2 աշակերտ ստացան 8 և 3աշակերտ 7
	Պահպանելով ժամանակագրական հաջորդականությունը մեկնաբանել Սյունիքի եվ Արցախի ազատագրական պայքարը

Տվյալների մշակում և վերլուծում

Մանրամասն ուսումնասիրելով և հետազոտելով հարցաղրումների մեթոդը տեսա,որ այն շատ արդիական է:Այն նպաստեց թիրախային խմբում գտնվող աշակերտների ակտիվացմանը:

Նրանց բոլորի մոտ նկատվեց դրական տեղաշաժ:

Նախնական արդյունքներն էին՝

1.Աղաջանյան Նարեկ-միջին գնահատական 6

2.Առուստամյան Էլմիրա միջին գնահատական 6

3.Արզումանյան Էդգար. միջին գնահատական 6

ՈՒսումնառությունն իրականացնելուց հետո՝

1.Աղաջանյան Նարեկ-միջին գնահատականը 7

2.Առուստամյան Էլմիրա- միջին գնահատական 8

3.Արզումանյան Էդգար- միջին գնահատական 7

4. Ջամալյան Գարիկ- միջին գնահատական 7

Ամփոփում

Կրթության որակի ապահովումը կրթական համակարգի տարբեր աստիճաններում այսօր արդեն անմիջական կապ ունի նոր մեթոդների ներգրավման հետ:

Կրթության կարևորությունը գիտակցելով պետք է հասկանանք,որ կրթության միջոցով կարող ենք հասնել հասարակական մտածողության,հոգևոր,բարոյական և մշակութային արժեքների զարգացման:

Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ ավելացում նոր մեթոդներով դասերի անցկացում, անհրաժեշտ է, որ ուսուցիչը կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները:

ՈՒսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից,թե որքանով է ուսուցիչը կոմպետենտ հարցադրումների կիրառման և այդ մակարդակում գիտելիքների կիրառման և այդ մակարդակում գիտելիքների փոխանցման , ժամանակի հետ համահունչ քայլելու հարցերում:

Աշխատանքը լուրջ և մանրամասն հետազոտության արդյունք է, որի նպատակն էր քննարկել հարցադրումների մեթոդը դասի ընթացքում :

Հետազոտության արդյունքում պարզ եղավ, որ այս մեթոդը նպաստում է աշակերտների ակտիվացմանը դասապրոցեսին:

Գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Հ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004թ., 157 էջ:

2. Gose, M. (2009). When Socratic dialogue is flagging: questions and strategies for engaging students. J Coll Teach Learn. 57(1):45–49.

3. Chin, C (2007). Teacher questioning in science classrooms: what approaches stimulate productive thinking? J Res Sci Teach. 815–843

4.Համացանց՝ հղումներ

- https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf
- https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.html
- http://www.mskh.am/sites/default/files/user/44/files/hartseri_karewor owtyowne.docx